ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАНА

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

N 101

«6» 07 2020թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2020թվականի հունիսի 30-ի թիվ 3 նիստի որոշումները:

Առդիր՝ թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 16 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՆԻՍՏԻ

16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի, ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

17-Ա.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ/

18.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

19.ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ/

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. ՂԱՐԻԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2020թվական թիվ 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել՝Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2020թվականի հունիսի 30-ի, թիվ 3 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	3 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական հունիսի 30
Մրգաստան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2020թվական թիվ 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 18-ի 1-ին մասի 5-րդ կետով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2020թվականի բյուջեի կատարման առաջին կիսամյակի հաղորդումը՝ համաձայն հավելվածի
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	3 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական հունիսի 30
Մրգաստան համայնք

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020թվականի հունիսի 30-ին, ժամը 14:00-ին օրենքով սահմանված կարգով, տեղի ունեցավ Հ. Հ. Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավար՝ Ռաֆիկ Հենրիկի Խաչատրյանի 2020թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունը՝ բյուջեի կատարման վերաբերյալ:
Խուսափելով մարդկային կուտակումներից, ավագանու նիստը կազմակերպվել էր միայն ավագանու 3 անդամների, համայնքի ղեկավարի և քարտուղարի մասնակցությամբ :
Օրակարգում՝

1.Համայնքի ղեկավարի 2020թվականի առաջին կիսամյակի բյուջեի կատարման հաշվետվությունը:

Զեկուցող՝ /Ռ. Խաչատրյան/

2.Քննարկումներ.

Ժողովը բացեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Ս. Ղարիբյանը, ով ներկաներին ծանոթացրեց օրակարգին:Նա նշեց, որ բյուջեի միջոցով իրականացվում է համայնքի կենսագործունեությունն ապահովող ֆինանսատնտեսական քաղաքականությունը:Այն հնարավորություն է տալիս մոտիկից ծանոթանալու բնակչության հոգսերին, մտահոգություններին, լսել գնահատականներ կատարված աշխատանքների արդյունքների վերաբերյալ:Խնդրեց ելույթից հետո կարծիքներ արտահայտել համայնքի ղեկավարի «Բյուջեի կատարման վերաբերյալ» 2020թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին և գնահատել աշխատանքը:
Այնուհետև ձայնը տրվեց՝ համայնքի ղեկավար՝ պարոն Ռ. Խաչատրյանին:
Ողջունելով ներկաներին պարոն Ռ. Խաչատրյանը իր ելույթը սկսեց հետևյալ տողերով. Հարգելի ներկաներ՝ կորոնավիրուսային վարակի առկայության պայմաններում ,ստիպված ենք այս ստվար կազմով անցկացնել ավագանու նիստը՝հաշվի առնելով այն հանգամանքը ,որ կան հրատապ լուծում պահանջող հարցեր:Նախ իմ ելույթով ներկայացնեմ ըստ ոլորտների համայնքի բյուջեի կատարման աշխատանքները, 2020թվականի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի վերաբերյալ:
Իրականացնելով օրենքով սահմանված կարգով, համայնքի ղեկավարի իրավասություններ, առաջնորդվելով ավագանու կանոնակարգով հաշվետու ժամանակաշրջանում, իմ կողմից հրավիրվել և վարվել է ավագանու 3 նիստ, որտեղ քննարկվել են համայնքին վերաբերվող կարևորագույն հարցեր, հիմք ընդունելով համայնքի 2020թվականի ՏԱՊ-ում արձանագրված համայնքի ուժեղ և թույլ կողմերը:
Այժմ ներկայացնեմ առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքները՝ ավագանու նիստերի և բյուջեի կատարման վերաբերյալ:
Ավագանու անդրանիկ նիստում հաստատվել է՝ ավագանու նիստերի ժամանակացույցը, ամենամյա գույքագրման փաստաթղթերը, համայնքում աղբահանություն իրականացնելու պայմանագիրը և սան. մաքրման սխեման, ինչպես նաև մշտական հանձնաժողովների կազմը:
Առաջին եռամսյակում հաղորդում է ներկայացվել՝ բյուջեի կատարման մասին, ավագանու անդամների և համայնքի բնակիչների առջև, որտեղ արտացոլվել է հողի հարկի և գույքահարկի հավաքագրման մակարդակը:Համայնքում ասֆալտապատման աշխատանքները, որի վերաբերյալ ներկայացվել է սուբվենցիայի հայտ ապա ծրագիր, որը գտնվում է նախապատրաստական փուլում
Այժմ կնշեմ կատարված աշխատանքները՝ ըստ ոլորտների.

Մրգաստան համայնքի համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է՝ 9 աշխատողներից, որոնցից 6-ը հանրային ծառայողներ են, 1-ը զբաղեցնում են քաղաքական պաշտոն, 2-ը իրականացնում է տեխնիկական սպասարկում:
Համայնքի 2020թվականի դոտացիան կազմել է՝ 25 374.6 դրամ:
Համայնքի հողային տարածքը կազմում է՝ 296.6հա., որից 205.13հա. վարելահող, բնակավայրի հողերը 60հա,, այգիները կազմում են՝ 5.44 հա.:
Համայնքը՝ ունի մեկ միջնակարգ դպրոց:
Գյուղացիների հիմնական զբաղմունքը՝ հողագործությունը և անասնապահությունն է:
Ավագանու կողմից հաստատվել է՝
1.«Տեղական տուրքերի և վճարների» դրույքաչափերը 2020թվականի համար:
2. 2020թվականի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
3.համայնքի ղեկավարի վարձատրության չափը:
4.համայնքում իրականացվող աղբահանության պայմանագիրը և սան. մաքրման սխեման:
Օրենքներով և այլ իրավական ակտերով, հաշվետու ժամանակաշրջանում իմ կողմից իրականացվել է պետության կողմից պատվիրակված և կամավոր լիազորություններ:
Հաշվետու ժամանակաշրջանում համայնքի ավագանու որոշմամբ կատարվել է բյուջեի 1 փոփոխություն:
Իմ հանձնարարությամբ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից իրականացվել է աշխատակազմի անխափան աշխատանքը:Մասնավորապես՝ նախապատրաստվել է համայնքի ավագանու նիստերի օրակարգը:Նիստում քննարկվող հարցերի նախագծերը, մեկ շաբաթ առաջ իրազեկվել է ավագանուն:
Նշված հարցերի օրակարգը և նրանում քննարկվող հարցերը փակցված են եղել հայտարարությունների համար նախատեսված տեղերում, համայնքի բնակիչներին իրազեկելու նպատակով:Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի կողմից, ավագանու որոշումները, համայնքի ղեկավարի որոշումները և կարգադրությունները՝էլեկտրոնային տարբերակով առաքվել է մարզպետարան,իսկ բյուջեում կատարված փոփոխությունները սահմանված ժամկետներում թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչով առաքվել է Արդարադատության նախարարություն և մարզպետարան:
Ժամանակին տրվել է պատասխան մարզպետարանից և այլ կազմակերպություններից եկած գրություններին:
Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը՝ յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող առաջին շաբաթվա ընթացքում, ներկայացնում է իր կատարած աշխատանքների հաշվետվությունը:
Կազմակերպվել է ընդունելություն՝ համայնքի ղեկավարի, աշխատակազմի քարտուղարի, համայնքի ավագանու, ինչպես նաև համայնքին կցված համայնքային ոստիկանի մոտ:
Ընդունելության դիմած՝ 30 քաղաքացիներից 16-ի դիմումներին տրվել է պատասխան օրենքի սահմաններում:Հիմնականում բնակչության դիմումները այս կիսամյակի ընթացքում եղել են սոցիալական բնույթի դիմումներ:Դիմումներն գրանցվում են՝ գրանցամատյանում:
Համայնքի բնակչությանը առաջին կիսամյակի ընթացքում տրվել է՝ 720000 /յոթ հարյուր քսան հազար/ դրամի դրամական օգնություն:
Հիմնականում այս տարվա օգնությունները վերաբերվել են՝ համայնքի բնակիչ հանդիսացող 2020թվականին մահացած հանգուցյալների ընտանիքներին, ինչպես նաև հայկական բանակ զորակոչված զինծառայողներին և ծանր վիրահատության կարիք ունեցողներին :
Ղեկավարվելով «ՏԻՄ» Հ.Հ. օրենքի պահանջներով իմ կողմից իրականացվել է օրենքով սահմանված մի շարք պարտադիր լիազորություններ:Հաշվետու ժամանակաշրջանում վերահսկողություն է իրականացվել հողի հարկի և գույքահարկի հարկատեսակների հավաքագրման աշխատանքների նկատմամբ:
Հողի հարկը առաջին կիսամյակում 2050.0 /երկու միլիոն հիսուն հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 737.4 /յոթ հարյուր երեսունյոթ հազար չորս հարյուր/ դրամ, կատարվել է՝ 36 տոկոսով:
Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 1835.0 /մեկ միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար/ դրամի դիմաց հավաքագրվել է՝ 1280.4 /մեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար չորս հարյուր/ դրամ, կատարվել է՝ 69.8 տոկոսով:

Գույքահարկ շենք-շինությունների համար՝ 60.0 /վաթսուն հազար/ դրամի դիմաց հավաքագրվել է՝ 22.6 /քսաներկու հազար վեց հարյուր/ դրամ, կատարվել է՝ 37.7 տոկոսով:

Տեղական տուրքերի գծով՝ համայնքի տարածքում առևտրի կետերի, ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար, սահմանված՝ 42.0 /քառասուներկու հազար/ դրամի դիմաց, հավաքագրվել է՝ 20.5 /քսան հազար հինգ հարյուր/ դրամ, կատարվել է՝ 48.8 տոկոսով:
Շինարարության թույլտվության համար համայնքի բյուջե է մուծվել 80 000 /ութսուն հազար դրամ/:

1.Քաղաքացիների տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ աշխատանքները.

1.1Համայնքի արխիվից, համայնքի բնակիչներին տրամադրվել է փաստաթղթեր և պատճեներ, տրվել են նաև տեղեկանքներ տարբեր կազմակերպություններ ներկայացնելու համար:

2.Ֆինանսների բնագավառում իրականացրել եմ հետևյալ պարտադիր լիազորությունները.

2.1Համայնքի ավագանու հաստատմանն եմ ներկայացրել համայնքի բյուջեի նախագիծը և դրանում առաջարկվող փոփոխությունները:
2.2 Իմ կողմից ստորագրվել են ֆինանսական փաստաթղթերը:
2.3Հարկերը և օրենքով սահմանված վճարումները չկատարած անձանց նկատմամբ կիրառվել է նախազգուշացում՝ ծանուցման եղանակով՝ առձեռն:

3.Հասարակական կարգի պահպանության բնագավառում, իմ կողմից իրականացվել է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները.

3.1Համայնքին կցված ոստիկանի կողմից, շաբաթը մեկ անգամ ստացվել է տեղեկատվություն՝ համայնքում կատարված իրավախախտումների վերաբերյալ, որոնք վերջին ժամանակներս պակասել են եղածների համար կիրառվել է՝ բանավոր նախազգուշացում:

4.Պաշտպանության բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ կամավոր լիազորությունները.

4.1Աջակցել եմ զորակոչին, զորահավաքներին:Միջոցներ եմ ձեռնարկել՝ զին. ծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման ուղղությամբ:Մասնավորապես՝ համայնքում ունենք զոհված ազատամարտիկի մայր, որի նկատմամբ մեր կողմից ցուցաբերվում է ամենօրյա ուշադրություն:
4.2Աշխատանքներ են տարվում նաև երիտասարդության շրջանում, ռազմահայրենասիրական ոգին բարձրացնելու նպատակով:
5.Աննկատ չեն մնացել ներկա պահին իրենց զինվորական պարտքը կատարող զինակոչիկների ընտանիքները:
Բանակ զորակոչված յուրաքանչյուր զինվորի ընտանիքին ցուցաբերվում է դրամական աջակցություն՝ 30 000 /երեսուն հազար/ դրամի չափով, զինվորական երդմանը՝ ծնողների մասնակցությունը ապահովելու համար:

5.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում, իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները

5.1Սահմանված դեպքերում համայնքի բնակչությունը իրազեկվել է քաղաքաշինական նորմերի փոփոխությունների մասին:
5.2Իրականացվել է հսկողություն համայնքի սեփականություն համարվող շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման նկատմամբ:
5.3Կազմվել է համայնքի 2019թվականի գույքագրման փաստաթղթերը, որը ներկայացվել է ավագանու հաստատմանը:
5.4Կազմակերպվել է համայնքի որոշակի տարածքների բարեկարգում և կանաչապատում:
5.5Բնականոն ձևով կազմակերպվում է նաև աղբահանությունը:
5.6Ավագանու որոշմամբ կանոնակարգվել է գերեզմանատների գործունեությունը:

5.7Իմ կողմից մեծ ուշադրություն է դարձվում համայնքի հուշարձանի և հարակից տարածքի պահպանման աշխատանքներին:Տարածքը բարեկարգված է :
5.8Կադաստրի մարմիններում կազմակերպել ենք՝ բնակիչների սեփականության իրավունքի գրանցում և անշարժ գույքի համար սեփականության իրավունքը հաստատող վկայականի ստացում, ինչպես նաև կատարվել են ճշտումներ կապված համասեփականատերերի՝ անվան, ազգանվան և հայրանվան հետ:
5.8Արդեն ավանդույթ է դարձել համայնքում իրականացվող շաբաթօրյակները, որի կազմակերպման աշխատանքներին ներգրավում է համայնքի բնակչությունը, դպրոցի ուսուցիչները և աշակերտները, համայնքապետարանի աշխատակազմը :
5.9Արտակարգ իրավիճակի պայմաններում համայնքապետարանում ստեղծված աշխատանքային խմբի կողմից, շաբաթական երկու անգամ կատարվում է քլորի հիմքով ախտահանման աշխատանքներ:2020թվականի հունիսի 27-ին խմբի կողմից կազմակերպվեց դիմակների բաժանման արշավ, համայնքի վարչական տարածքում :
5.10Խիստ հսկողություն ենք իրականացնում համայնքի առևտրի կետերում, պարետի որոշումների կատարման՝մասնավորապես դիմակների կրման նկատմամբ:Մեր կողմից պարբերաբար փողոցների բանուկ մասերում համայնքային ոստիկանի մասնակցությամբ կատարվում է հերթապահություն, որը նպաստում է մարդկային կուտակումներից խուսափելուն:Փորձում ենք հայտարարությունների միջոցով ևս իրազեկել բնակչությանը, զերծ մնալ անհարկի կուտակումներից և խստորեն պահպանել պարետի կարգադրությունները:

6.Հողօգտագործման բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

6.1Սահմանված կարգով իրականացվել է հողամասերի ընթացիկ հաշվառումը, կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը, որը ներկայացվել է ավագանու հաստատմանը:
6.3Հաստատումից հետո՝ հողային հաշվեկշռի օրինակը կներկայացվել է մարզպետարանի համապատասխան բաժին:

7.Առևտրի և ծառայությունների բնագավառում իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

7.1Իմ կարգադրությամբ ստեղծվել է հանձնաժողով, որը տարվա ընթացքում կիսամյակը մեկ անգամ հսկողություն է իրականացնում առևտրի կետերում:
7.2Համայնքում առկա է երկու առևտրի կետ:

8.Մշակույթի, կրթության և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում, իմ կողմից իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

8.1Համայնքում գործում է ազգային պարերի խմբակներ տարբեր տարիքային խմբերի համար, պարուսույց՝ Աննա Մարգարյանի գլխավորությամբ: Պայմանագրի արժեքը կազմում է՝ 1 020.0 /մեկ միլիոն քսան հազար/ դրամ:

9.Իմ կողմից գյուղատնտեսության բնագավառում իրականացվել է հետևյալ պարտադիր լիազորությունները.

9.1Կազմակերպել եմ համայնքի տարածքում անասնաբույժական ծառայության միջոցառումներ: Երկարաձգվել է համայնքի անասնաբույժի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագիրը, որի արժեքն է՝ 480 000 /չորս հարյուր ութսուն հազար/ դրամ:
9.2Իմ կողմից կազմվել է հանձնաժողով և կատարվել է անասնագլխաքանակի հաշվառում համայնքում:
9.3Աջակցել եմ գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը կազմակերպվել է ցորենի բերքահավաքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

1.Համայնքի աշխարհագրական դիրք:

2. Պահուստային հողերի առկայություն,
3.Վերանորոգված միջնակարգ դպրոց:
4.Բուժ. կետ:
5.Ավտոկանգառ
6.Հանգստի գոտի /հուշարձանի տարածք/
7.Եկեղեցի 18-րդ դար /սուրբ Հովհաննես/
8.Մասնակի վերանորգված ճանապարհներ
9.Շուրջօրյա ջրամատակարարում
10.Գազամատակարարում

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

ա/Կոմունալ տնտեսության ինժեներական ցանցերի, ճանապարհային ցանցերի անմխիթար վիճակը, որոնք վերանորոգման կարիք ունեն:
բ/«Մշակույթի տան» շենքի 3-րդ աստիճանի վթարային վիճակը:
գ/Ոռոգման ջրի կիսախողովակների բացակայությունը/:
դ/Գործազուրկների մեծ քանակը:
ե/Մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները:
զ/Շատ են անտունները, որոնք ունեն բնակարանային ապահովման կարիք:
է/Համայնքը չունի մանկապարտեզ,համայնքապետարանի շենք, ինչպես նաև մշակույթային օջախներ, խաղահրապարակ:
է/Դպրոցը չունի սպորտի դահլիճ:Սպորտ դահլիճի վերակառուցման համար, ստացել ենք դրամաշնորհ, որը հուսով եմ մինչև նված ժամկետի ավարտը կօգտագործվի շինարարության վրա:
թ/Կարևորագույն խնդիր է համայնքում հանրային տրանսպորտի աշխատանքը, որը իսպառ բացակայում է՝ համայնք մտնող ճանապարհի ասֆալտե ծածկույթի վատ վիճակի պատճառով:
ժ/Համայնքն ունի նաև 2 խորքային հորի վերաբացման խնդիր, որը հնարավորություն կտա ոռոգման սեզոնը արդյունավետ կազմակերպելուն:
Ես այս ամենը ներառել եմ՝ 2017-2021թ.թ համայնքի զարգացման հնգամյա ծրագրում, ինչպես նաև համայնքի ՏԱՊ-ում ՝ նշելով համայնքում իրականացվող աշխատանքների առաջնահերթությունը:
Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը հաստատվել է՝ 2016թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 2 նիստի, թիվ 10-Ն որոշմամբ և ներկայացվել է Արդարադատության նախարարություն փորձաքննության:
Եզրափակելով ելույթս նշեմ, որ համայնքում առկա խնդիրները շատ են:Իմ նպատակն է անել հնարավորինս ավելին:
Ներկա պահին աշխատանքներ են տարվում համայնքի կենտրոնական փողոցը մասնակի վերանորոգելու ուղղությամբ:
Օրակարգի՝ 2-րդ հարցով ելույթ ունեցողները նշեցին, որ համայնքում առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի առկայությունը, ինչպես նաև սպորտ դահլիճի կիսակառույց շենքի վերանորոգման աշխատանքները, քանի որ համայնքի երիտասարդությունը մեծ ձգտում ունի տարբեր սպորտաձևերի նկատմամբ և պարապելու համար մեկնում է էջմիածին, որը մեծ դժվարություն է ներկայացնում հանրային տրանսպորտի բացակայության պայմաններում:
Ներկաները համայնքի ղեկավարի կատարած աշխատանքը՝ տվյալ ժամանակահատվածի համար գնահատեցին բավարար:
Ռ. Խաչատրյանը ավելացրեց, որ իր ցանկությունն է լուծում տալ առաջնահերթ խնդիրներին, սակայն բյուջեն թույլ չի տալիս կատարել նման մեծածավալ աշխատանքներ, և որ ակնկալում է համայնքի բնակիչների աջակցությունը համայնքում իրականացվող աշխատանքներին, ինչպես նաև ըմբռնումով մոտենալ հողի հարկերի ժամանակին մուծմանը:
Օրակարգի հարցերը սպառվել են:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ

«30» հունիսի 2020թվական թիվ 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» որոշմամբ, հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի գրությունը, ինչպես նաև Մրգաստան համայնքի ղեկավարի 2020թվականի հունիսի 16-ի թիվ 19 կարգադրությունը՝ համայնքի ընթացիկ տարվա հաշվեկշիռը կազմելու մասին.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի հողային հաշվեկշռը՝ 2020թվականի հուլիսի 1-ի դրությամբ:
2.Ավագանու կողմից հաստատված հողային հաշվեկշիռը ներկայացնել՝ Արմավիրի մարզպետարան օրենքով սահմանված ժամկետներում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ	3 կողմ	Օդեմ	0 ձեռնպահ
Հ. Եդիգարյան			
Թ. Ջանգիրյան			
Ա. Հովակիմյան			

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական հունիսի 30
Մրգաստան համայնք

Ձև N 22

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01/07/2020թ.)

Մարզ: Արմավիր (անվանում) — 4 (Կոդ)

Համայնք: Մրգաստան (անվանում) — 292 (Կոդ)

(հեկտարներով)

NN	Նպատակային նշանակություն	Հողատեսք, գործառնական նշանակություն	Կոդի NN	Ընդամենը ¥2+3+4+8+12°	ՀՀ բաղադրիչի հաշվով	ՀՀ իրավասության	Սեփականության սուբյեկտ: համայնքային: ընդամենը (5+6+7)	համայնքային: տրված անհատույց	համայնքային: տրված վարձակալության	համայնքային: օգտագործման և վարձակալության	պետական: ընդամենը (9+10+11)	պետական: տրված անհատույց	պետական: տրված վարձակալության	պետական: օգտագործման	Սեփականության սուբյեկտ չունի կամ տեսակը չի բնորոշվում
	Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.1	1. Գյուղատնտեսա կան	վարելահող		137.59	126.40		12.59		5.44	7.15					
1.2		բազմ տնկարկներ.		8.02	8.02										
1.2.1		այդ թվում՝ պտղատու		5.44	5.44										
1.2.2		խաղողի այգի		2.58	2.58										
1.2.3		այլ բազմամյա													
1.3		խոտհարք													
1.4		արոտ													
1.5		այլ հողատեսքեր		59.52	1.40		58.12			58.12					
1		Ընդամենը		206.53	135.82		70.71		5.44	65.27					
2.1	2.Բնակավայրերի	բնակելի		60.43	60.31	0,119									
2.1.1		այդ թվում՝ տնամերձ		60.43	60.31	0,119									
2.1.2		այգեգործական (ամառ-ն													
2.2		հասարակական		1.06	0.03		0.63			0.63	0.40			0.40	
2.3		խառը կառուցապատման													
2.4		ընդհանուր		12.15			12.15			12.15					
2.5		այլ հողեր		0.23			0.23			0.23					
2		Ընդամենը		73.87	60,34	0,119	13.01			13.01	0.40			0.40	
3.1	3. Արդյունաբ., ընդերքօգտ.	արդյունաբերության													
3.2		գյուղատնտեսական,		8.92	0.50		8.42			8.42					
3.3		պահեստարանների													
3.4		ընդերք օգտագործման													
3		Ընդամենը		8.92	0.50		8.42			8.42					
4.1	4.Էներգետի կայի, տրանսպորտ	էներգետիկայի		0.07			0.07			0.07					
4.2		կապի													
4.3		տրանսպորտի		3.03							3.03			3.03	
4.4		կոմունալ													
4		Ընդամենը		3.10			0.07			0.07	3.03			3.03	
5.1	5. Հատուկ պահպանվող տարածքների	բնապահպանական													
5.1.1		այդ թվում՝ արգելոցներ													
5.1.2		արգելավայրեր													
5.1.3		ազգային													
5.2		առողջարարական													
5.3		հանգստի													
5.4		պատմական և		2.52			2.52			2.52					
5		Ընդամենը		2.52			2.52			2.52					
6	6. Հանրային	Ընդամենը													
7.1	7. Անտառային	անտառ													
7.2		թփուտ													
7.3		վարելահող													
7.4		խոտհարք													
7.5		արոտ													
7.6		այլ հողեր													
8.1	8. Ջրային	գետեր		1.69							1.69			1.69	
8.2		ջրամբարներ													
8.3		լճեր													
8.4		ջրանցքներ		1.43			1.43			1.43					
8.5		հիդրոտեխ. և ջրտնտ. այլ													
8		Ընդամենը		3.12			1.43			1.43	1.69			1.69	
9.1	9. Ոչ արտադրական	աղուտներ													
9.2		ավազուտներ													
9.3		ճահիճներ													
9.4															
9.5		այլ անօգտագործելի													
9		Ընդամենը													
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ				298.06	196.66	0,119	96.16		5.44	90.72	5.12			5.12	

Մրգաստան համայնքի ղեկավար

Ո. Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63

ՈՐՈՇՈՒՄ
«30»հունիսի 2020թվական թիվ 19

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ է

1.Մրգաստան համայնքի բնակիչ՝ Մայիս Արարատի Թովմասյանին եղբոր մահվան կապակցությամբ հատկացնել՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ:
2.Մրգաստան համայնքի բնակիչ՝ Մացակ Վարդկեսի Բաբայանին բուժման գնալու նպատակով հատկացնել՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ:
3.Մրգաստան համայնքի բնակչուհի՝ Անգին Սերյոժայի Հարությունյանին հետվիրահատական բուժում անցնելու նպատակով հատկացնել՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ:
4.Մրգաստան համայնքի բնակիչ՝ Մինաս Պետիկի Սմբատյանին կնոջը բուժման տանելու նպատակով հատկացնել՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ:
5.Մրգաստան համայնքի բնակիչ՝ Խաչիկ Սամվելի Ավագյանին դեղորայք ձեռք բերելու նպատակով հատկացնել՝ 25 000 /քսանհինգ հազար/ դրամ:
6.Մրգաստան համայնքի բնակիչ, երկրորդ կարգի հաշմանդամ՝ Սարգիս Հրանտի Ասատրյանին վիրահատության գնալու համար հատկացնել՝ 100 000 /մեկ հարյուր հազար /դրամ:
7.Մրգաստան համայնքի բնակիչ՝ Սուրեն Վրեժի Մարտիրոսյանին, հորը՝ Վրեժ Մարտիրոսյանին բուժման տանելու համար հատկացնել 30 000/երեսուն հազար/ դրամ:
8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ 3 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ

Հ. Եդիգարյան
Թ. Ջանգիրյան
Ա. Հովակիմյան

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2020թվական հունիսի 30
Մրգաստան համայնք